

3-4277^a

Հայաստանի բարեկարգության միացել

Արմ.

3-4277₂

ՀԱՄԿՐՍՎԿՈՒՄԻ (Բ)

ԱԶՈՎ-ՍԵՎՏՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ

ԱՐԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՄԻ

ԴԻՄՈՒՄԸ


ՄՏԿ, ՍՊՎԽՈՁՆԵՐԻ, ԲՈԼՈՐ
ԱԾԽԱՏՈՂՆԵՐԻՆ, ԲՈԼՈՐ
ԿՈԼԽՈՁՆԻԿՆԵՐԻՆ, ԿՈԼԽՈ-
ԶՈՒՔՆԵՐԻՆ, ՅԵՎ ՍՈՑԻ-
ԼԻՍԱԿԱՆ ԴԱՅՏԵՐԻ ԲՈԼՈՐ
ՀԱՐՎԱԴԱՅԻՆՆԵՐԻՆ

Г.Л.Б в ЛНГР.

Ц. 1934 г.

Ար. № 346

ԽՎ. 22924



ՀԱՅԱԿԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԴԿՉՈՒԹՅՈՒՆ
ԹՈՒՑՈՎ-ԴՐՅ—1934

Зап. (47.89)

5776

Арм.

1 DEC 2000

2-22

5776-3

Մեր մեծ Խորհրդային յերկիրը, բանվորներն
ու կոլխոզնիկները Հենինի կուսակցության ղե-
կավարությամբ, բոլոր աշխատավորների առաջ-
նորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ, վճռա-
կան հաջողություններ ձեռք բերին մարդկային
պատմության մեջ չտեսնված խորհրդային իրա-
վակարգի և սոցիալիստական տնտեսության շի-
նարարության գործում:

Սպիտակ գեներալների և միջազգային կա-
պիտակիզմի վարձկանների դեմ մզգող քաղաքա-
ցիական կատաղի պատերազմում բանվորներն
ու գյուղացիները համառ աշխատանքով, բազ-
մաթիվ զրկանքների գնով պաշտպանեցին իրենց
Խորհրդային յերկիրը, ստեղծեցին իրենց առա-
ջակարգությունաբերությունը:

Հենց այդ նվաճումների հիմունքով աշխա-
տավոր գյուղացիությունը աղքատ անհատական
գյուղացիական տնտեսությունից անցավ խոշոր
մեքենայացված կոլխոզային տնտեսությանը, վերջ
ովեց եր դարավոր շահագործողին — կոլակու-
թյանը:

Ответ. по выпуску В. ЦОВЬЯН

Театр ОИТЕР НИВЫДОВ

Сдано в набор 19-II—34 г.
Издание № 641,
Статформат А5 148x210,
Упаковка листа № В-427.

Пополнено в печать 13 III—34 г.
Оформ 1,5 печ. листа.
Заказ № 1056.
Тираж 1500.

Типография им. Стаски 1902 г. АЧСЛТ.

Ростов на Дону.

Հենինի-Ստալինի կուսակցությունն, իր 17-րդ կուսակցական համագումարում զնում ե նոր, մեծ խնդիրներ—յերկրորդ հնգամյակում կառուցել անդասակարգ սոցիալիստական հասարակակարգ, վերջ տալ այն բոլոր պատճառներին, վորոնք ծնում են մեկի կողմից մյուսին շահագործում, ձնշում և թե՛ արդյունաբերության մեջ, թե՛ գյուղատնտեսության մեջ վերջնականապես հաստատել արտադրության սոցիալիստական ձև, վորապես արտադրության միակ միջոց, վորն ընդունակ ե ել ավելի պարագնդելու բանվորների և գյուղացիների միությունը, մոտեցնել քաղաքը և դյուղը, վոչչացնելով նրանց միջև գոյություն ունեցող հակասությունը։ Դրա հետ կապված ե բանվորների նյութական ու կուլտուրական մակարդակը մի բանի անզամ բարձրացնելու, «կոլխոզները բոլշևիկյան և կոլխոզնիկներին ունեվոր դարձնելու» ընկ։ Ստալինի լոգունդի կատարման խնդիրը։

Մեր յերկրամասի կոլխոզնիկները ջախջախեցին կուլակության մասցորդներին, սպիտակ-գվարդիականներին, կուբանի անկախականներին, դենիկինցիներին, վորոնք 1932 թվին յերկրամասի մի շարք ռայոններում, առանձնապես կուբանում կազմակերպել եյին սարոտաժ, վորձ անելով վիժեցնել կոլխոզային շնարարությունը, վիժեցնել հացամթերումները, ցանքսը, յերկրամասն ու աճբողջ յերկիրը դնել սովոր վտանգի տակ։

Մեր յերկրամասի կոլխոզներն ու սովորներն ընկ։ Ստալինի նախանձեռությամբ ստեղծ-

ված քաղբաժինների ոգնությամբ, 1932 թ. սարոտաժային, ծանր տարուց հետո ձեռք բերին առաջին նվաճումները գալնանացանի, քաղիանի, բերքահավաքի և առանձնապես պետության հայահանձնման դեկրետի և ուրիշ պարտավորությունների կատարման ասպարեզում։

Կոլխոզնիկները փորձով համոզվեցին, վոր կուլակային սարոտաժի ուղին տանում ե միայն դեպի կարիք ու սով և վոր միայն կոլխոզային սեփականության ամրապնդումն ու բարեխեղճ վերաբերմունքը կոլխոզային աշխատանքի նկատմամբ, կոլխոզների բոլշևիկյան դեկավարության ամրապնդումը կարող ե դուրս բերել կոլխոզնիկներին այն աղքատ, թշվառ դրությունից, վորի մեջ եյին պահում անհատական տնտեսությունները, ցարական ինքնակալությունն ու կապիտալիստական իրավակարգը։

Այժմս, ակնհայտ ե յուրաքանչյուր կոլխոզնիկին, վոր լավ բերքի համար, անամնապահության վերելքի համար, ունեվոր և կուլտուրական կյանքի համար կան բոլոր հնարավորությունները, կա բոլոր անհրաժեշտը։

Այժմս յուրաքանչյուր կոլխոզնիկ արդեն գիտե, վոր հացահանձնման դեկրետի համաձայն, խսկապես վերցնում են ցանքսի պլանից միայն հացամատիկի սահմանված քանակությունը և վոր պետությանը հանձնվող բերքի այդ աննշան տոկոսից դուրս, բոլորը մնում ե իր տրամադրության տակ, կոլխոզների ու կոլխոզնիկների կարիքների համար։

Արդեն 1934 թվին յուրաքանչյուր կոլխոզ և կոլխոզնիկ կարող է ապահովվել հացով և ուրիշ նյութական պաշարներով այն չափով, ինչպես մեր յերկրամասի առաջավոր կոլխոզները 1933 թվին։ Պետք է միայն վերջ տալ այն հսկայական թերություններին կոլխոզների և սովորողների աշխատանքներում, վորոնք փչացնում են մթերքի զգալի մասը, վոր կարող տալ և տալիս է մեզ մեր խորհրդային հողը։

Մտնելով գարնանացանի նախապատրաստման ամենապատասխանատու շրջանը, մեր յերկրամասի յուրաքարչյուր կոլխոզնիկ պետք է հիշի ընկ. Ստալինի այն խոսքերը, վոր նա ասել ե Դնեպրովետրովսկու հարվածայինների հետ զրուցելու ժամանակ։

«ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐՆ ՈՒՆԵՆ ԱՅՆ ԱՄԵՆՔ, ՎՈՐՊԵՍՁԻ ՈՒՆԵՎՈՐ ԱՊՐԵՆ։ ՆՐԱՆՑ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՅԵՎՍ ՄԻ ԲԱՆ. ԿՈԼԽՈԶՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ, ԱԶՆԻՎ, ՈՒ ԽՆԱՑԵԼ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԲԱՐԻՔԸ ՅԵՎ, ՅԵԹԵ ԲՈԼՈՐ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԸ, ԲՈԼՈՐԸ, ՅԵՎ, ՎՈԶ ԹԵ ՄԵԾԱՄՍՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱԶՆԻՎ, ԱՇԽԱՏԵՆ, ԿՈԼԽՈԶՆԵՐԸ ԿՀԵՂԵՂՎԵՆ ՄԹԵՐՔՆԵՐՈՎ, ՆՐԱՆՔ ԿՀԵՂԵՂՎԵՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ ԲԱՐԻՔՈՎ, ՅԵՎ, ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ ԿԴԱՌՆՍ. ԱՇԽԱԲՀԵ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՄԸ ՅԵՐԿԻՐԸ։»

Ընկ. ՍՏԱԼԻՆՆ ՈՒՂՂԱԿԻ ԱՍԱՑ, ՎՈՐ «ԱՆԳԱՄ ՏԱՍՏԱԱՅԵՐԿՈՒ ԿԻԼՈԳՐԱՄՆ ԵԼ ՄԻ ԱՇԽՈՒԹԻՆ ԴԵՌ ՔԻՉ Ե, ՀԱՐԿԱՎՈՐ Ե Ս.Վ.ԵԼԻ, ՅԵՎ, ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐՆ ԵԼ ԱՎԵԼԻ ԿՈՒՆԵՆԱՆ, ՅԵԹԵ ՆՐԱՆՔ ԿՈԼԽՈԶՈՒՄ ԱԶՆԻՎ, ԱՇԽԱՏԵՆ։

Ի՞նչն է կասեցնում մեր ամբողջ կոլխոզային տնտեսության լրիվ ծաղկմանը, ի՞նչն է կա-

սեցնում անխտիր բոլոր կոլխոզնիկներին ունեար դարձնելու գործը։ Դեռ կոլխոզնիկների մի մասի մեջ, զեպի իրենց աշխատանքը, զեպի կոլխոզային գույքը գոյություն ունեցող անբարեխիղճ, իսկ հաճախ ուղղակի հանցավոր, մասարարական վերաբերմունքը։

Ահա թե ինչու այժմ ամենագլխավոր, ամենահիմնական խնդիրն է հասնելնրան, ՎՈՐՊԵՍՁԻ ԲՈԼՈՐ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԸ ՅԵՎ ՎՈԶ ՄԻԱՅՆ ՄԵԾԱՄՍՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈԼԽՈԶՈՒՄ ԱԶՆԻՎ ԱՇԽԱՏԵՆ։

Այդ է պահանջել ընկ. Ստալինը։ Այդ պետք է կատարեն Ազով-Սեվծովյան կոլխոզնիկները։

Ի՞նչպես կատարել։ Ել ավելի ուժեղ հարձակվել հակակոլխոզային տարրերի վրա, ծույլի, ձրիակերի, կորդողի վրա, ել ավելի ուժեղացնել հարվածայինի, առաջավոր ազնիվ կոլխոզնիկի պատասխանատվությունը հետամնացներին, անբարեխեղճ աշխատողին առաջ բաշելու համար։

Առաջավոր կոլխոզնիկներն ու կոլխոզուհիները, ՄՏԿ և սովորողների բանվորները, բանվորների ու կոլխոզնիկների ամբողջ մասսան, վորոնք հաստատ կերպով վորոշել են սոցիալիստական աշխատանքի հիմունքով կուսակցության ու բանվոր դասակարգի հետ կառուցել իրենց լավագույն ապագան, այլևս չեն կարող հանդուրժել, վորպեսզի կոլխոզնիկների հետամնացմասն իր կասկածներով ու տատանումներով ընկնելով կուլակային ազդեցության տակ, ան-

ուղղելի վաս հասցնի կոլխոզային ու սովխոզային տնտեսությանը, վիճեցնի կոլխոզային ունեփրությունն ու կուլտուրական կյանքը:

Հետ նայել դեպի հինը, դեպի անհատական տնտեսությունը այլևս հարկ չի լինի: Բոլորով, մինչև վերջին կոլխոզնիկը պետք է առուր և մինչև վերջ վճռե ազնվորեն աշխատել կոլխոզներում ու սովխոզներում, այնպես, ինչպես աշխատում են, որինակ՝ Դոլբենկոյի, Սաֆոնովայի, Տկաչեվի, Դոնչենկոյի «250-ի» լավագույն բրդադները:

Մենք գարնանը պետք ե այնպիսի հարձակման անցնենք, վոր այս տարի մեղանում վոչմի հետ մնացող կոլխոզ ու սովխոզ շինի: Մինչեվ անդամ ամենահետամնաց կոլխոզը ներկայումս ցույց տրված պետական ողնության, լավ դեւ կազարության, կոլխոզնիկների ազնիվ, անձնվեր աշխատանքի դեպքում բոլոր հնարավորություններն ունի այս տարի բարձրանալ բոլշեվիկյան կոլխոզների մակարդակին, վորոնք յուրաքանչյուր աշխորին նվաճել են 10, 15, 20 կիոզքամ:

Ինչպես պետք ե աշխատենք, վոր մեր յերկրամասում շինեն հետամնաց, վատ կոլխոզներ, վորպեսզի մեր լավագույն կոլխոզներն ել ավելի առաջ շարժվեն ընկեր Ստալինի ցույց տված ճամբով:

ԱՌԱԶԻՆ ՅԵՎ. ԳԼԽԱՎՈՐ ԳՈԾԸ — դա այն է, վոր անհամեմատ ավելի վազ ցանենք, քան անցած տարիներում, յերբ վաղացան հասկայինները ցանում եյինք 30—40 որ, յերբ ուշ

ցանվող բույսերի ցանքան ավարտում եյինք հունիսին, այն ժամկետերին, յերբ մինչև անգամ շեյին ցանում ամենաանփույթ անհատական տնտեսությունները: Առավել ևս այդպիսի ժամկետերում չեն կարող ցանել մեր կոլխոզներն ու սովխոզները: Վոչ մի որ, վոչ մի ժամ չպետք է կորցնել գարնան սկզբից: ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՑԱԾ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ ՑԱՆՔԻ ԺԱՄԿԵՏԵՐԸ ՄԵՆՔ ԿԿՐՃԱՏԵՆՔ ՅԵՐԿՈՒՄԵԿ ՅԵՎ ԱՆԳԱՄ: Միայն այդ ժամանակ մենք կազատվենք «յերաշտից», «ժանդից», «ցեցից» և հացի բերքի վոչնչացման ուրիշ պատճառներից, վորոնք ամենից առաջ կախված են ուշ ցանքից և աշխատանքի ու ցանքի վատ վորակից:

1934 թվին մենք պետք ե այնպես աշխատենք, ՎՈՐՊԵՍԶԻ ՅԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ ԱՄԵՆ ՄԻ ԿՈՂԻՇՆԻԿԸ 250 — 300 ԱՇԽՈՐԻՑ ՊԱԿԱՍ ԶՎԱՍԱԿԻ:

1934 թվին ՅՈՒՐԱՓԱՆՉՅՈՒՄ ՏՐԱԿՏՈՐ ՊԵՏՔ ե ԱՄՄԱԿԱՆ ՏԱ ՎՈՉ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 400 ԺԱՄՎԱ. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽՈՏԱՆՔ:

Տրակտորի հետ միասին ցանքի հաջողությունը կախված է ձիու վորակից: Մինչև գարնանացանը մենք պետք ե լավ պարարտացնենք կոլխոզի ձիերին. մենք պետք ե կարողանանք անմիջապես դադարեցնելնրանց կոտորածը: Կարգի բերեք յեղներին, ավելացրե՛ք աշխատող յեղների քանակը, ֆերմաներից հանձնելով 1931 և 1932 թվերին ծնված յեղները, ոգտագործելով նրանց թեթեվ աշխատանքներում:

1934 թվին ԱՄԵՆ ՄԻ ՀԵԿՏԱՏԻՑ ՄԵՆՔ
ՊԵՏՔ Ե ԲԵՐՔ ՀԱՎԱՔԵՆՔ ՄԻՉԻՆ ԹՎՈՎ ԲՈ-
ԼՈՐ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԲՈՒՑՍԵՐԻՑ, ՆԵՐԱՌԵԱԼ
ՆԱՅԵՎ ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԸ ՀՅՈՒՍ. ՄԱՐԶՈՒՄ
ՎՈԶ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 8 ՑԵՆՏՆԵՐ, ՍԱԼՍԿԻ ՏԱՓԱՍ-
ՏԱՆՆԵՐՈՒՄ —ՎՈԶ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 8—9 ՑԵՆՏ-
ՆԵՐ, ԻՍԿ ԿՈՒԲԱՆԻ ՅԵՎ ՄՅՈՒՄ ԿՈԼԽՈԶՆԵ-
ՐՈՒՄ —ՎՈԶ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 10—12 ՑԵՆՏՆԵՐ:

Աշնանավարը կատարվեց միայն պլանի 36
տոկոս, դրա համար կոլխոզների գարնանացանը
պետք է կատարվի գլխավորապես գարնանավարի
հաշվին: Մենք արդեն չենք կարող թույլ տալ
վարը պրոպաշնիկներով և ցորենի գութաններով,
այլ ինչ ել վոր լինի, պետք է ապահովենք խոր
վարը գութաններով (14—18 սանտիմետրից վոչ
պակաս): Դա մեկն ե այն գլխավոր պայման-
ներից, վորոնք ապահովում են պայքարը մոլա-
խոտերի դեմ և լավ բերքը:

Գերավաղ ցանքի փորձն անցյալ տարի ցույց
տվեց, վոր յուրաքանչյուր հեկտարի բերքա-
տվությունն աճում է 2—3 ցենտներ: Դրանք
հենց հացի այն ցենտներներն են, վորոնք ավելա-
ցրին կոլխոզնիկների յեկամուտները, ավելացրին
աշխորի արժեքը մինչև 10—15 կիլոգրամ: Դրա
համար աշնանավարի տարածություններում պետք
է ցանել 300 հազար հեկտար գերավաղ ցանք,
և բացի այդ, 30 հազար հեկտար գարնանացա-
նին հարմարեցրած (յարօնականաց) սեր-
մացույով (սերմացու, վորը հատուկ պատրաստ-
ված է աճումն արագացնելու համար):

Այլևս չի կարելի հանդուրժել, վոր արժե-
քավոր բույսերը, ինչպես գենագերչակը, վորն
անհրաժեշտ է մեր ավիացիայի համար, ճակն-
գեղը, արեվածաղիկը, ծխախոտը վատ ցանվեն,
մշակվեն և հավաքվեն և դրա հետևանքով տան
նորմալ բերքի կեսը և կեսից ել պակաս: Այդ
արժեքավոր և յերկրի համար անհրաժեշտ տեխ-
նիկական բույսերը պետք է առաջին հերթին
ապահովել խոր աշնանավարով, մշակերտվ դաշտը
առաջին հերթին ու լավագույն ձեվով և ժա-
մանակին վաղ ցանելով:

Մեր սեփական անհոգության և այն, վոր
չենք հասկանում ապրիլի-մայիսի սև ցելերի
վճռական նշանակությունը լավ աշնանացանի և
նրա բերքի համար, վիժեցրինք 1933 թվի ցելի
կամպանիան: Մենք իրավունք չունենք այս տարի
կրկնել այդ սխալը: ՅՈՒՐԱԲԱՆՉՅՈՒՄ ՄՏԿ
ՅԵՎ ՍՈՎԻՈԶ, ՅՈՒՐԱԲԱՆՉՅՈՒՄ ԿՈԼԽՈԶ ՈՒՇ
ՑԱՆԿՈՂ ԲՈՒՑՍԵՐԻ ՑԱՆՔԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ՊԱՐ-
ՏԱԿՈՐ ԵՆ ԱՊԱՀՈՎԵԼ ՎԱՂ ՅԵԼԱՎԱՐԸ ՅԵՎ
ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՄՇԱԿՈՒՄԸ:

Մենք պետք է հենց գարնանն այնպես աշ-
խատենք, վորպեսզի վերջ տանք մոլախոտերին,
դաշտերի վատ մշակմանը, վորովիետև մոլախո-
տերից չմաքրված, բացատներով, անհավասար
ցանված և այլ թերություններով մշակված հողը
մեզ կտա վոչ թե հացահատիկ, այլ կորնգան,
փուշ, սեզ և այլ մոլախոտեր:

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՎՈՐԱԿԸ ՎՃՌՎՈՒՄ Ե ՎՈԶ
ԹԵ ՄԱՐՏԻՆ, ԱՊՐԻԼԻՆ, ՄԱՅԻՍԻՆ, ԱՅԼ ԱՅՍՈՐ,

վաղը, վճռվում ե այն բանով, թե յերբ և ինչպես կնորոգվեն տրակտորները և գյուղատնտեսական գործիքները, ինչ դրության կինի կենդանի լրձկանը գարնանացանին, ինչպես կրնտրվի, կմաքրվի և կպատրաստվի լավագույն սերմացուն, կախված նրանից, թե յուրաքանչյուր բրիգադը ժամանակին կիմանա արդյոք իր դաշտը, իր ցանքային առաջադրությունը, ինչպես կղասավորվեն ու կամրացվեն իրենց մեքենային, դութանին կամ շարքացանին յուրաքանչյուր առանձին կոլխոզնիկ ու բանվոր, վաղորոք ինչպես տեղում կկազմակերպվի դաշտակայանը, կրերվի կերը, սերմացուն և այն բոլորը, ինչ անհրաժեշտ ե յուրաքանչյուր բրիգադի, ամբողջ կոլխոզի, յուրաքանչյուր սովխոզի բաժանմունքի, ամբողջ սովխոզի կազմակերպված աշխատանքի համար. կախված ե նրանից, թե արդյոք կապահովվի կուլտուրայի ցանքսաշրջանառությունը, նախքան վարը կմաքրվեն արդյոք դաշտերն՝ անցյալ տարվա մոլախոտերից:

Մեր կոլխոզների և սովխոզների համար ամենադժվարը—դա այն ե, վոր կոլխոզնիկները սովորեն լինել աշխատանքի լավ դեկավարներ (բրիգադիր, դաշտավար, կոլխոզի նախագահ), լինեն լավ տրակտորիստ, շոֆեր, մեխանիկ, իր դործի ժամնագետ:

Գյուղացին յերբեք չգիտեր այն բարձր տեխնիկան, խոշոր տետեսության այն կազմակերպությունը, ինչպիսին հանդիսանում են կոլխոզն ու սովխոզը:

Հենց դրա համար ել մեր տրակտորները, վորոնք կատարում են գարնանային բոլոր աշխատանքների կեսից ավելին, վատ են աշխատում, մշակում են նորմայի կեսը, ձգձգում են վարուցանքը: Մեր Ազով-Սեվալովյան յերկրամասում ավելի, քան 20 հազար տրակտոր կա, նրանք կրկնակի անգամ լավ կարող են աշխատել: Տիրապետել մեքենան, տիրապետել տեխնիկան, սովորել ղեկավարել կոլխոզնիկներին նրանց աշխատանքի ընթացքում—ահա այն գժվար խնդիրը, վորը մենք պետք ե այս գարնանը շատ ավելի լուծենք, քան մինչև այժմ: Դրա համար այն մեկ—մեկ ու կես ամիսը, վոր մնացել ե մինչև գարնանացան, պետք ե լրիվ և ամբողջությամբ ոգտագործի յուրաքանչյուր տրակտորիստ և կոլխոզնիկ, վորպեսզի սովորի իրեն հանձնած գործը:

Բայց ամենազլիսավորն այն ե, ինչ ասել ե ընկեր Ստալինը. «պահապանել կոլխոզային գույքը և բարեխեղճ աշխատել»:

Այս ամենը կարելի յե գլուխ բերել, յեթե բոլոր կոլխոզնիկներն ու զենան բարեխղճորեն աշխատել. (իսկ մենք դեռ ունենք 15—20 տոկոսի չափ կոլխոզնիկներ, վորոնք մի տարում 30—50 աշխատից պակաս ունեն). ինամբով և սիրով վերաբերել մեքենային, ձիուն, կոլխոզային բարիքին, միայն այս պայմաններով ամեն մի կոլխոզնիկ կարող ե սովորել աշխատելու մեքենայի և դաշտային բոլոր աշխատանքների վրա:

Յեթե անցյալ տարիներում, պայքարելով աշխատանքային կարգապահության համար, շատ

կոլխոզներն իրենց գլխավորուշադրությունը դարձնում են բոլորով աշխատանքի դուրս գալու վրա, ապա 1934 թվին, աշխատանքին հարյուր տոկոսով դուրս գալու գործն ապահովելու հետ միասին վողջ ուշադրությունը պետք է կենտրոնացվի առանձին վերցրած ՅՈՒՆԱՔԱՆՉՅՈՒՆԻՐ ԿՈԼԽՈԶՈՒՀՈՒ, ՅՈՒՆԱՔԱՆՉՅՈՒՆԻՐ ՄԵՔԵՆԱՑԻ ՆՈՐՄԱՑԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՅԵՎ ՀԵՆՑԻՐԱ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐՄԵՒ ՎՐԱ:

Նորմաների թերկատարումը հենց գործալքում է համարվում։ Այն կոլխոզնիկը, վորը չել կատարում նորմաները, նա գողանում է իր բոլոր հարեւաններին, արգելք է լինում մի աշխորին ավելի շատ յեկամուտ ստանալուն։ Գարնանացանի հենց առաջին որերից սկսած պետք է ոգտագործվեն հասարակական ներգործության, հասարակական հսկողության բոլոր ձևերը (կարմիր և սև տախտակներ, ինքնահաշվետվություններ, հարվածայինի կաթսա, շեֆություն հետ մնացողների վրա և այլն), վորպեսզի մեր յերկրածասի բոլոր կոլխոզնիկները—բոլոր կոլխոզային բրիգադիրները առանց այլայլության կատարեն նորմաները։

ԸՆԿԵՐ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐ, ՄՏԿ և ՍՈՂԽՈԶՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐ.

Անցյալ տարվա ընթացքում, խորտակելով կոլխակային սարոտաժը, մենք ձեռք բերինք միայն առաջին հաջողություններ, կոլխոզների ուսովագուների ամրապնդման և գյուղատնտեսության գնական բարձրացման ասպարիզում։ Հատ-

կապես այս տարվա գարնանը մենք վերջնական բեկում պետք է ձեռք բերենք գյուղատնտեսական աշխատանքներում, ամրապնդենք այդ բեկումը և ապահովենք բերքը, ապահովենք ունենոր կյանք կոլխոզնիկների համար և նյութական բարեկիցություն՝ բանվորական ու կոլխոզային լայն մասաների համար։

ԸՆԿԵՐ ԲԱՆՎՈՐՆԵՐ, ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐ, ԿՈԼԽՈԶՈՒՀՈՒՀԻՆԵՐ. Ձեզանից է կախված, թե արդյոք մեր գյուղատնտեսությունը կկարողանալ այս տարի վճռել հողամշակման վորակը, նշանակալից չափով բարձրացնելու բերքատվությունը և կոլխոզնիկների կյանքի մակարդակը բարձրացնելու խնդիրը։

ԱՌԱՋԱՏԱՐ ԿՈԼԽՈԶՆԵՐ ՅԵՎ ԲՐԻԳԱԴՆԵՐ. Ձեր ուսանելի որինակը, ձեր ընկերական ոգնությունը հետ մնացողներին, ձեր խիստ վերահսկողությունն ավելի քան կարեւոր և արժեքավոր են հատկապես այժմ, հենց այսոր և հարկավոր վճռականապես ներգործել հետամնացների վրա, հենց արմատից պետք է վերակառուցել նրանց աշխատանքը, գարնանից պետք է կանխել նրանց հետամնացությունը։

Գործով, գործնականապես, առանց աղմուկի զինեցե՛ք հետամնացներին ձեր փորձով։ Առանց անձնագորության նայելու մերկացրե՛ք մնապետք ղեկավարներին, ձեր հետեւից տարեք հետամնացներին, նվաճելով ընդհանուր վերելք։

ԸՆԿԵՐ ԿՈԼԽՈԶԱՑԻՆ ԲՐԻԳԱԴԻՐՆԵՐ. Այժմ բոլորին պարզ է, վոր բրիգադից և կախված ամ-

բողջ կոլխողային արտադրությունը։ Ամբողջ յերկրամասը պարծենում է «250» առաջավոր բրիգուդների շարքով։ Հասեք այդ առաջավոր շարքին։ Զմրանը որինակելի կերպով նախապատրաստեցեք քաշող ուժը, սերմացուն, մարդկանց, հող՝ բարձրորակ ցանքսի համար, տաքորները կառուցեք ձմեռ ժամանակ։ Այն բոլորը, ինչ կարելի յե անել գտրնանացանի համար, դաշտային աշխատանքները գարնանը հաջողությամբ անցկացնելու համար, արեցեք հիմա։

ԸՆԿԵՐ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂՆԵՐ. Բոլոր մեքենաների, ամենից առաջ, տրակտորների հարվածային վերանորոգումով, մեր յերկրամասը, վորը Խորհրդային Միության մնացած բոլոր յերկրամասերից ավելի շատ ե զինված բարդ գյուղատնտեսական մեքենաներով, պետք ե սկսի արշավանք՝ հանուն յերկրում տրակտորառոգությունան լավագույն ցուցանիշների, հանուն մեքենաների ամենաբարձր արտադրողականության։ Մերկազրե՛ք ինքնահոսի հերոսներին, ամենաանողոք հարված հասցրեք վերանորոգման վորակը վատացնելու ամեն մի փորձին, ոգտագործե՛ք յուրաքանչյուր ժամ՝ մեքենայի վերանորոգման առաջադրանքը առանց այլևայլության ժամկետին կատարելու համար։

ԸՆԿԵՐ ՏՐԱԿՏՈՐԻՍՏՆԵՐ. Քանի վոր մեր յերկրամասում անշանավարը քիչ ե, ապա նշանակում ե ցանքսի հաղթանակը կվճռի հարվածային գարնանավարը։ Արդյոք ժամանակին եք դուրս գալու դաշտ, արդյոք կատարելու յեք

նորմաները դաշտ դուրս գալու հենց առաջին իսկ որերից—ահա զրանից կախումն ունի այն, թե այնուհետև ինչպես կրնթանան բոլոր գյուղատնտեսական աշխատանքները տարվա ընթացքում, ինչպիսի բերք ե տտացվելու, ինչքան յեկամուտ ե համնելու մի աշխորին։ Միրեցեք ձեր յերկաթյա ձիերին, պահպանեցեք նրանց՝ վորպես թանկապին սոցիալիստական սեփականություն, խայտառակեցեք՝ հողին և բերքատվության հարցերին ձևականորեն և անտեսավար կերպով վերաբերվելու յուրաքանչյուր արտահայտությունը։

Հիշեցեք, վոր ձեր յուրաքանչյուր տրակտորը մի ամսվա ընթացքում արտադրապես աշխատելու յե վոչ պակաս, քան 400 ժամ։ Հիշեցեք, վոր տրակտորի ամեն մի ժամվա պարապուրդը պատճառ կդառնա բերքի ցենտներների, աշխորին հասանելիք յեկամտի կիլոգրամների կորստյան։

ԸՆԿԵՐ ԶԻԱՊԱՆՆԵՐ. Կուլակային-ֆասար մնացորդները դեռ չեն կորցրել իրենց հոյսը, դեռ չեն դադարեցրել իրենց փորձը՝ կոլխոզներում լծկանի ուժը խորտակելու ուղղությամբ։ Կոլխոզային դաշտերում լավ վերանորոգված տրակտորի կողը պետք ե աշխատի լավ մնված կոլխոզային ձին։ Աշխատեցեք, վոր կոլխոզներում ավելի շատ մատակներ լինեն, վորպեսզի կոլխոզներում ամեն նոր, դիմացկուն, ուժեղ ձիեր։

ԸՆԿ. ԿՈԼԽԶՈՒՀԻՆԵՐ. Մեր յերկրամասում չկա մի կոլխոզ, վորտեղ յուրաքանչյուր որ չհասաւատվեյին ընկ. Մտալինի արդարացի խոսքերը, վոր կինը կոլխոզում մեծ ուժ է։ Աշխատեցեք, ՀՈՅԱԿԱՐԱ. Արմ. ССР

փորպեսզի յուրաքանչյուր բրիգադում բրիգադիրի ոգնականը լինի ամենախելոք, ամենաբարեխեղճ և ամենայեռանդուն կոլխոզնիկուհին։ Յեղեք ձեր կոլխոզների խոկական տերերը, ցավեցեք գարնանացանում կորցրած ամեն մի ժամանակ համար, հայրատացեք յուրաքանչյուր բարեխեղճորեն, բոլշևիկորեն ցանված հեկտարով։

ԳԵՐԱՎԱԴ ՑԱՆՔՍԻ ԸՆԿԵՐ ՑԱՆՈՂՆԵՐ, ԿՈԼ-
ԽՈԶԱՅԻՆ ՀԻՆ ԳՎԱՐԴԻԱՄ, ՎՈՐԱԿԻ ՏԵՍՈՒԶ-
ՆԵՐ. Առաջինը դուք եք գնալու ակոսները, հե-
րոսաբար կովեցեք ամենավաղ ժամկետերի; ցան-
քսի ամենաբարձր վորակի համար։ Յերիտա
սարդությունից պահանջեցեք սրտացավ աշխա-
տանք։ Վոչ մի ներողամիտ վերաբերմունք
ցույց մի տաք հանդեպ ագրոտեխնիկայի կանոն-
ների նույնիսկ ամենափոքր խախտումը։

Մենք կարող ենք և պարտավոր ենք ցանել
այնպես, վորպեսզի վերջ տրվի կուլակային սա-
բուտաժի խայտառակ ժառանգությանը — մեր
ցանքսերի աղտոտվածությանը, ցանցառությանը,
վորպեսզի մեր հացաբույսերն իրենց մաքրությամբ
ուրախացնեն տեսնողին, վորպեսզի մենք կարո-
ղանանք հավաքել նրանք կոմբայններով, կարել
մաքուր՝ փակշիռ հացահատիկ։

Հյուսիսային Կովկասյան յերկրամասն իր
նախկին սահմաններում այժմ բաժանված է յեր-
կու նոր անկախ յերկրամասերի։ Յերկրամասի
փոքրացումը թույլ է տալիս ավելի լավ, կոնկ-
րետորեն զեկավարելու վոչ միայն յուրաքան-
չյուր ռայոն, ՄՏԿ, այլ նաև յուրաքանչյուր

առանձին կոլխոզ, առանձին բրիգադ, թույլ ե-
տալիս ավելի լավ խմանալու դրությունը, յուրա-
քանչյուր առանձին կոլխոզնիկի կարիքը։

ՄԵՐ ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍԸ
ԱՅԺՄ ՍԿՍՈՒՄ Ե ՄՐՅԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ
ՀՅՈՒՍԻՍԱԲԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԵՏ,
մրցակցություն՝ գարնան լավագույն աշխատանքի
համար, մրցակցություն՝ անխտիր բոլոր կոլխոզ-
նիկների ամենաարագ կերպով ունեվոր կյանք
նվաճելու համար, մրցակցություն՝ կոլխոզների
վիառատության համար։

Կոլխոզնիկները, կոլխոզուհիները, բրիգադիր-
ները, ՄՏ կայանների և սովխոզների բանվո-
րուհիները ցույց են տվել արդեն սոցիալիստա-
կան մրցության և հարվածայնության որինակներ,
վորը զեռ լենինի որով սկսված եր ֆաքրիկա-
ներում և գործարաններում։

ՀԵՆԳ ԻՐԵՆԳ՝ կոլխոզնիկների և բանվորների
ակտիվ և համառ պայքարի շնորհիվ միայն կա-
ռելի յե ձեռք բերել գարնանացանի հաջող անց-
կացում։ Այդ իսկ պատճառով կարևորագույն
խնդիրն է ծավալել սոցմրցումը կոլխոզների, սով-
խոզների, կոլխոզային բրիգադների միջև, ծա-
վալել կոլխոզնիկների, կոլխոզուհիների, առանձին
խմբերի, յուրաքանչյուր առանձին կոլխոզնիկի
մրցումը՝ աշխատանքի ավելի արագ և ավելի
լավ վորակի, հարվածային աշխատանքի կազմա-
կերպման համար, ամեն տեսակի արտոնություն-
ներ և հարգանք ցույց տալ լավագույն աշխատող
հարվածային կոլխոզնիկին, կոլխոզուհուն։

Սոցմրցման մեջ սենք փառավոր հաղթանակների կհասնենք այն դեպքում, յերբ մեզանում չմնի վոչ մի կոլխոզիկ, վոչ մի բանվոր, վորն ակտի վորեն չմասնակցի Հյուսիսային կովկասի հետ կընքված մեր սոցմրցմանը։ Մենք այդ ասպարիզում խոշոր հաղթանակներ ձեռք կրերենք ազնիվ, անձնվեր և հերոսական աշխատանքով, ամենից առաջ գարնանացանի դաշտերում։ Սոցմրցումն արդեն առաջ է քաշել մեր յերկրամասի բանվորների և կոլխոզնիկների միջից սոցիալիստական հողագործության այնպիսի առաջնորդների, հերոսների, ինչպես՝ բրիգադիրներ — Դոլբենկո, Դոչենկո, Տկաչեվ, Սաֆոնովա, Ռկոլելով, Գրիցուն, վորապես տրակտորիստներ — Դուլահ, Շեշենկո, Լյախ և ուրիշներ։ Այս առաջավորների հետեւց բարձրանում են տաճայակ և հարյուրավոր նոր հերոսներ։

Մեր յերկրային կուսկոնքերանսին վողջունեց յերկրամասի առաջավոր կոլխոզային բրիգադների պատգամավորությունը։ Մրանք այն բրիգադիրներն եյին, վորոնք աշխատել են հենց նույն պայմաններում, ինչ վոր ուրիշ հազարավորները մեր յերկրամասում։ Սակայն ազնիվ, բոլշեվիկյան աշխատանքով նրանք կարողացան վերջնել հողից լավագույն բերք։ Այս բրիգադիրների մեջ կային ընկ. Մարնիչենկոն (Տարասովսկի ուայոնից), վորը գերավաղ ցանքսից հավաքել ե մի հեկտարին 20 ցենտներ, ընկ. Զերնիշին (Տեմրյուկի ուայոնից), վորը մի հեկտարից հավաքել ե 20 ցենտներ, ընկ. Տկաչե (Նովո—Կորսունկի ՄՏ կայանից), վորը մի հեկտարից հավաքել ե 20 ցենտներ

արևածաղիկ, ընկ. Բիչկալովը (Կրամնողարի ուայոնից), վորը 1 հեկտարից հավաքել ե 18 ցենտներ ցորեն և այլն։

Այս ընկերները կոնֆերանսին հավատացրին, վոր 1934 թվին այնպիսի բերք, ինչպիսին իրենք են ունեցել, կլինի նաև Ազով-Սեվժովյան յերկրամասի հարյուրավոր, հազարավոր կոլխոզային բրիգադների մոտ։ Նրանք յերկրային կուսկոնքերանսին հանձնեցին կոլխոզային բրիգադների 1500 պարտավորություններ՝ ստորագրված 60.000 կոլխոզնիկների կողմից, հանձնելու համար կուսակցության 17-րդ համագումարին։ Մրանք բարձր բերքատվության բրիգադների ստալինյան զորահավաքի պարտավորություններ են, վորոնք գարնան հեղեղի նման լեցվում են մեր յերկրամասում։

Տասնյակ հազարավոր կոլխոզնիկները, վորոնք ակտիվորեն միացան բարձր բերքատվության բրիգադների գորահավաքին, բարձր բերքի, կոլխոզային լիառատության համար մզկող իրենց պայքարը կապեցին ամբողջ աշխարհի բանվորների սիրելի և իմաստուն առաջնորդի, Լենինի գործը հանձարեղ շարունակողի ընկ. Ստալինի անվան հետ։ Հազարավոր կոլխոզնիկներն իրենց կոչն անվանեցին ստալինյան կոչ։

Ավելի բարձր Լենինյան սոցմրցության դրոշը Ավելի բարձր հարվածային աշխատանքի դրոշը, վորը կապահովի լավ, ժամանակին կատարված ցանքս և կոլխոզային ու սովորողային բոլշեվիկյան բերք։

Կուսկոնֆերանսը կոչ ե անում ձեզ ամրացնել կոլխոզային ուժեղ աշխատանքային կարգարապահությունը, սիրով վերաբերվել կոլխոզին պատկանող ամեն մի մեքենային և գույքին, կոչ ե անում ձեզ դիմել դեպի նոր հաղթանակները մեր կոլխոզները բոլշևիկյան դարձնելու գործում, հառաջ դեպի հաղթանակները ունենոր կյանքի ուղու վրա:

Հատկապես սրանով ե, վոր մենք կկատարենք Լենինի պատգամները, հենց սրանով ե, վոր մենք կիրագործենք մեր մեծ առաջնորդ ընկ. Ստալինի ցուցմունքները, վորն առաջնորդում ե մեր կուսակցությանը դեպի նոր հաղթանակներ բանվորների և կոլխոզնիկների լուսավոր և լավագույն կյանքի համար մղվող պայքարում։

ԱԶՈՎ. ՍԵՎԾՈՎՅԱՆ ՑԵՐԿՎԱՄԱՍԻ
ԱՌԱՋԻՆ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍ

ՀՀ Ազգային գրադարան



NL0186534

9162
Лена

10

ЧПР.
Коп.

8339

Арм.

3-427

ОБРАЩЕНИЕ

1-й Краевой Азово-Черноморской парт-
конференции ко всем работникам МТС,
совхозов, колхозникам, колхозницам,
бригадирам, всем ударникам социалис-
тических полей

На армянском языке

СКЛАД ИЗДАНИЯ
Ростов на Дону
Ул. Ф. Энгельса, 90
ПАРТИЗДНТ